ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 21 հունիսի 2000 թ.:

Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների շրջանակներում հունիսի 19-24-ը Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Հայաստանի բոլոր մարզերում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերի միջոցով տեղի ունեցավ հավաքական մկրտություն, որի ընթացքում մկրտվեցին 2000 թվականի հունվարի 1 - փետրվարի 14-ը Հայաստանում ծնված երեխաները:

Հունիսի 21-ին հավաքական մկրտություն կատարվեց նաև Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում: Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի հանդիսապետությամբ մկրտվեցին Շիրակի թեմի շուրջ 200 մանուկներ, որոնց տրվեցին մկրտության վկայականներ ու օրհնված խաչեր:

Ի տարբերություն այլ թեմերի, շիրակցի երեխաների մկրտության կազմակերպումը հայոց հոգևոր կենտրոնում նկատվեց իբրև Շիրակի՝ որպես աղետի գոտու հանդեպ Սուրբ Էջմիածնի առանձնակի հոգածության և զորակցության արտահայտություն:

Մկրտության արարողությունը վերածվեց գեղեցիկ մի տոնախմբության, որի ընթացքում հանդես եկան Մայր Աթոռի Հայորդյաց տան ազգագրական և պարի համույթը, Էջմիածնի կամերային նվագախումբը:

Հունիսի 22-ին Մայր Տաճարում մկրտվեցին շիրակցի ևս 200 մանուկներ: